

Անբրիլիս կը հասնի առտուան ժամը 10ին, եւ Տօբօրը կը հասաստէ Սրբազանին կարուածանար ըլլալը (Hemiplegia): Չէին շարժեր իր ձախ ձեռնն ու ոտքը, բիշ մը ծուած էր ձախին վրայ իր բերանը, եւ իր խօսքը ծանր էր ու դժուար ըմբռնելի: Բայց արեան շրջանառութիւնը շատ լաւ էր եւ գիտակցութիւնը յսակ: Նոյն օրը Սրբազանը փոխադրուեցաւ Ամերիկեան Հիւանդանոց, եւ հոն, շնորհիւ չափազույց խնամքներու եւ բժշկական աշխուրջ հսկողութեան (Տօբ. Միլլըր իբրեւ Վերաստուշ, Տօբ. Եկնի-Գօմբեան իբրեւ ընդհ. պատասխանատու, որուն խորհրդակից էին Տօբ. Պէյլըր, Տօբ. ձիսկեան եւ Տօբ. Պաղտասարեան), իր առողջութիւնը, հակառակ իր տարիքին, ունեցաւ շատ արագ ապահովումի ընթացք մը: Կարճ ժամանակ մը վերջ, յսակ եւ հասկնալի եղաւ իր խօսքը, յետոյ շարժեցաւ իր ձախ ոտքը, եւ սկսան շարժիլ իր ձախ ձեռնին մասերը: Համաձայն բժիշկներու հատաստումներուն, սուղ ժամանակաշրջանի մը մեջ, Նորին Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը պիտի վերստանայ իր առողջութիւնը, ի միախառութիւն իր հոգեւոր գաւազներուն, որոնց միջոց իրենց սիրելի Հօր այս անակնկալ դժբախտութեան առիթով եղաւ աւելի քան խոր ու իրական, եւ համայն ազգին՝ որուն նայուածքը այնքան կարողին կը փարի իր հասունութեանը մեջ գեղեցիկ այս տեսնում փառքին, իբրեւ վերջինը իր սերունդին, որոնցմէ շատեր երախտիքով լեցուցին զմեզ: Իր վճիռն եւ ապա ուրախութեան մեջ, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ նախ Գերաշնորհ Տ. Եղիշեկ Աբեպօ. Կարօեանին, Գերապատի Տ. Արտազակ Աբեպօ. Սիւրմեանին եւ Կիլիկիոյ Կարողիկոսական Արքայ Միաբանութեան, մեր Սրբազան Հօր նկատմամբ իրենց ցոյց տուած եղբայրական այնքան անձնուէր սիրոյն եւ խնամքին համար: Ինչպէս նաեւ Ամերիկեան Հիւանդանոցի անձնուէր ու պատուական բժիշկներուն՝ Տօբ. Միլլըրին, Տօբ. Եկնի-Գօմբեանին, որ առաջին օրէն Ամենապատի Սրբազան Պատրիարք Հօր գլխաւոր դարմանող բժիշկը եղաւ, Տօբ. Պէյլըրին, Տօբ. ձիսկեանին, Տօբ. Պաղտասարեանին եւ իրենց գործակից հիւանդապան եւ հիւանդապանուհի բոլոր բարի հոգիներուն, որոնք Աստուծոյ իբրեւ գործակից-

ներ, այնքան խնամքով գիտեն հսկել մարդուն եղած մեծագոյն շնորհին՝ կեանքին վրայ: Մեծ կ'ըլլայ մեր երախտիքը, եւ խոր՝ մեր շնորհակալութիւնը, երբ փրկուած այդ կեանքը քանկազին ու սրբելի է մանաւանդ: Նաեւ մերազն եւ օտար եկեղեցական եւ աշխարհական այն բոլոր բարի հոգիներուն՝ որոնք առաջին վայրկեանէն սկսեալ իրենց այնքան լուրջութեամբ եւ հետաքրքրութեամբ՝ գուրգուրանքով շրջապատեցին Սրբազան Հայրը, միախառութեան ու խախտի առիթը հանգիստալով հարուածէն բեկուած իր հոգեւոր: Շնորհակալութիւն նոյնպէս հայ եւ օտար Մամուլի բոլոր ներկայացուցիչներուն, իրենց զգացած եւ արտայայտած ցախին համար:

Հօս, չենք կրնար չհրկնել շնորհակալութիւնն ու երախտիքը, Կիլիկիոյ Կարողիկոսութեան մեր հայր Միաբանութեան եւ անոր ներկայացուցիչ Գեր. Տ. Տ. Եղիշեկ եւ Արտազակ Սրբազաններուն, որոնք հայրական եւ եղբայրական սիրով հիւրասիրեցին եւ շրջապատեցին մեր Միաբանութեան անդամները, որոնք Սրբազան հիւանդը առանձին չձգելու համար փութացած էին իր քով, ուրիշներու խնամքին եւ գուրգուրանքին խառնելու իրենց եւ Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութեան միջոցն ու սերը:

Տխուր օրերը անցան իրենց կարելի բոլոր յոռի ենթադրութիւններով: Աստուած, Սրբոց Յակոբեանց զոյգ առաքեալներու բարեխօսութեամբ՝ շնորհեց մեզի Սրբազանին կեանքը: Վստահ ենք որ ամենաբարին Աստուած շուտով կ'աւարտեալ առողջութիւն պիտի շնորհէ մեր պատուական Հօր, քակուիք երկար տարիներ կարեւոր վայելելու զինչ այս պանծալի Արքային վրայ: Այս խոր սիրով եւ միախառութեամբ կ'ըստասենք իր վերադարձին, որ գիտենք քե պիտի չուշանայ:

**Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**

**ՀԱՆԳՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԺԱՌ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆԵՐՍ  
ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ճառանգաւորաց Վարժարանի եւ Բնմայրանի ամառային քննութիւնները՝ բերանացի և գրաւոր, սկսան 1942 Յունիս 22ին: Քննութեանց բացումը կատարուեցաւ ի ներկայութեան Պատ. Տնօրէն Ժողովոյ անգամներուն և ուսուցչական կազմին, որոնք անձանձրոյթ ներկայ եղան հարցաքննութեանց մինչև Յուլիս 29:

Ս. Թարգմանչաց Վարժարանի գրաւոր քննութիւնները, սկսուած՝ 1942 Յունիս 22ին, շարքի մը յետոյ շարունակուած բերանացի քննութիւններով, աւարտեցան Յուլիս 7ին:

ՄԱՐԶԱՀԱՆԳԷՍ Ժ.Ռ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

4 Յուլիս 1942, Շաբաթ կէսօրէ վերջ ժամը 5ին, տեղի ունեցաւ ժառանգաւորաց Վարժարանի տարեկան մարզահանդէսը, նախագահութեամբ Պատրիարքական ֆոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ. ճանարգեանի, և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և հրաւիրեալ ազգայիններու:

Ինչպէս նախորդ երկու տարիներուն, այս տարի ևս, ժառանգաւորաց Վարժարանի մարզանքի և խաղերու հոգը ստանձնած էր Հոգ. Տ. Թորգոս Արեղայ Մանուկեան: Ֆութպօլի, պասքէթ-պօլի և վօլիպօլի խաղերուն մրցումները կատարուեցին մարզահանդէսը կանխող շաբաթներու ընթացքին: Աշակերտութիւնը երկու խումբերու բաժնուած — Կարմիր և Կանաչ — իր մէջէն ընտրուած խմբապետները ունէր, իրրև պատասխանատուները խմբական խաղերուն:

Տարուան մէջ, կանոնաւորապէս ընթացք առած վերոյիշեալ խաղերուն հետ, ժառանգաւոր Սաները, որոշ պահերով ունեցած են կրթանքը շափական, Շուէտական մարզանքներու, որոնց գեղեցիկ մէկ պատկերն էր որ կը ներկայացնէր այսօրուան մարզական հանդէսը:

Մարզահանդէսը սկսաւ ժառանգաւորաց քայլերով և մարզիկներու տղանցքով. կատարուեցան ողիմպիական մրցանքները՝ վազքեր՝ 100-800 մէթր, օստումներ՝ բարձր և երկար, գնտարձակութիւն, զրօշարչաւ, պարանձգութիւն, և մէջ ընդ մէջ խմբական մարզանքներ՝ կռուութաւոր շարժումներու, հնդկական լախասխաղերու, ու նաև երեք ստքով վազքի, օտնացուպի, պարկարչաւի խաղեր՝ իրրև զուարճալիքի բաժին: Կռիկ էին բուրգերը իրենց կառուցումին այլազանութեամբ՝ գետինին և երկթև սանդուխի վրայ կանգնուած:

Մրցանակաբաշխութեան պահուն, Պատրիարքական ֆոխանորդ նախագահ Հայր Սուրբին ձեռքով, ֆութպօլի, պասքէթպօլի, ողիմպիականի, վօլիպօլի, զրօշարչաւի, պարանձգութեան խմբական մրցումներու մէջ յաղթական հանդիսացող խումբը ստացաւ նոյն նպատակին յատկացուած բաժակը կամ զրօշկը, իսկ ողիմպիականի մրցանքներու մէջ առաջին և երկրորդ հանդիսացող մարզիկները ստացան արծաթափայլ և ոսկեջրուած մետաղներ, երրորդները՝ ժապաւէններ:

Բոլոր խաղերուն, ինչպէս նաև ամբողջ այսօրուան մրցումներուն մէջ ժառանգաւոր Սաները ցոյց տուին մարզիկի վայել կարգապահութեան, աշխուսութեան, կրօնի, մրցանքի, աշխուսութեան ոգի:

ԻՄԱՅԱԿԱՆ ՄՐՅԱՆՔՆԵՐ

Յուլիս 18ին, Շաբաթ յետ միջօրէի ժամը 5ին, ի բացակայութեան նորին Ամենապատուութեան և Հոգեշնորհ ֆոխանորդ Հայր Սուրբին՝

նախագահութեամբ Հոգ. Տ. Նորայր Վարդապետի, տեղի ունեցաւ ժառ. Վարժարանի Ամալիեցի Հանդէսը՝ բազկացած երկու մասերէ: Առաջինը՝ ԻՄԱՅԱԿԱՆ ՄՐՅԱՆՔՆԵՐ. բացուեցաւ ժառանգաւորաց քայլերով, Ա. Ասեմախոսական Մրցանք. տրուած նիւթն էր՝ «Հանդէս և ոգեկանութիւն». մասնակցողներն էին Հայկ Մելքոնեան և Եղուարդ Հէքիմեան (Դ. Դասարանէն), երկու ատենախօսներն ալ, պարզելէ յետոյ շարժաթիթները, մինչև իսկ անհրաժեշտութիւնը հանդէսներու գոյութեան, իրրև արտայայտութիւնը բազմութիւններու խմբական զգացումներուն, ցոյց տուին սերտ յարաբերութիւնը հանդէսին և ոգեկանութեան, հաւաստելով նոյն ատեն թէ բոլոր հանդէսները են ու պէտք է ըլլան արտայայտութիւնը ոգեկանութեան մը, և հետեւաբար ներկայացուին որոշ հասկացողութեամբ արուեստով մը: Քննիչ մասնախումբի գնահատանքով, առաջին հոգեկանացաւ Ե. Հէքիմեան: Բ. Արսասմախոսական Մրցանք. պարտադիր քերթուած՝ «Ով Հայաստան» վ. Թէքէեանի. իսկ երկրորդ մը՝ մրցողէն ընտրուած: Մասնակցողներն էին Յ. Ատուրեան և Տ. Թաշեան (Բ. Դասարանէն), Հ. Մելքոնեան (Դ. Դասարանէն): Քննիչ մարմինէն իրրև առաջին գնահատուեցաւ Հ. Մելքոնեանի արտասանութիւնը, երկրորդ՝ Տ. Թաշեանինը: Գ. Երամեսլիկան Մրցանք. պարտադիր մենթոր՝ «Սորհուրդ խորին», և երկրորդ երգ մը մրցողէն ընտրուած. մասնակցողներն էին Յ. Սարգիսեան, Լ. Ալթունեան և Հ. Յրուենեան (Դ. Դասարանէն): Առաջին մրցանակի արժանի գնահատուեցաւ Լ. Ալթունեանի երգը, երկրորդ՝ Հ. Յրուենեանինը: Երգերուն, երգահոնի վրայ, կ'ընկերակցէր երաժշտութեան ուսուցիչ Հոգ. Տ. Կոմիտաս Արեղան: Գ. Գրական Մրցանք. ինքնագիր քերթուած մը՝ արձակ կամ օտանաւոր, նիւթը ընտրուած մրցողէն: Մասնակցողներն էին Տ. Թաշեան, Բ. Քէչիշեան (Բ. Դասարանէն), Ա. Ուրֆայեան, Ե. Հէքիմեան (Դ. Դասարանէն): Առաջին գնահատուեցաւ Ե. Հէքիմեան, երկրորդ՝ Բ. Քէչիշեան:

Տաս վայրկեանի դադարէ մը վերջ, շարունակուեցաւ Յայտադրի Բ. մասը՝ ՀԻՄԱՅԱԿԱՆ ՄՐՅԱՆՔՆԵՐ ԱՐԳԵՆՆԵՐ. զպրօցի երգ «Ով յարկ վճարեմք յետոյ» ժառանգաւոր Սաներէն երգուած զեկալարութեամբ Հոգ. Տ. Կոմիտաս Արեղայի, ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, հակիրճ բառերով ներկայացուց հոգեկան և իմացական պատկերը ուսանողութեան այս տարուան կեանքին: Յանուն ուսանողութեան Տիր. Մինաս Սրկ. Գասպարեանի կարգացած ուղերձէն յետոյ, ուր կ'արտայայտուէին երախտագիտական զգացումները ուսանողութեան, հանդէպ նորին Ամեն. Ս. Պատրիարք շօր, Պատ. Տնօրէն Ժողովին, հոգեշնորհ և յարգելի ուսուցիչներուն, Տեսուչ և Փոխ-Տեսուչ հայրերուն, երգուեցաւ Ա. Տէր Դադարեանի «Հայրենի Առուակ»ը, և Տեսչին ներկայած տեղեկագրին համաձայն կատարուեցաւ մրցանակներու բաշխումը՝ նախագահ շօր ձեռքով: Դ. Դասարանէն առաջին հան-

դիսացած էր Անդրանիկ Ուրֆալեան, երկրորդ՝ Հայկակ Ֆրունճեան, Բ. Դասարանէն առաջին՝ Տիրան Թաշեան, երկրորդ՝ Հայկ Գոշյումճեան, Ա. Դասարանէն առաջին՝ Մանուկ Սմբատեան, երկրորդ՝ Սիմոն Զատիկեան: Ամբողջ Վարժարանի մէջ ուսմանց միջինի բարձրութեամբ առաջին հանդիսացած է Անդրանիկ Ուրֆալեան, երկրորդ՝ Հայկակ Ֆրունճեան: Ամենուն տրուեցաւ հայ եւ օտար հեղինակներէ զանազան դրական գործեր: Կոմիտասի Զոր փակման խօսքով և Տէրունական աղօթքով հանդէսը փակուեցաւ:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅՑ ՎԱՐՃԱՐԱՆԻ  
ԱՄՍՎԱՅԵՐԻ ԼԱՆԳԻՍՏԵՐ

Յուլիս 25 երեկոյեան ժամը 5ին, ժառ. Վարժարանի բակին մէջ, տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէզի բաժնին Ամալիբըի Հանդէսը, նախագահութեամբ Գեոր. Տ. Կիւրեղ Ի. Վրդ. Ի եւ Ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և խուսն բազմութեան: Կոկիկ Յայտագրի մը համաձայն կատարուեցան արտասանութիւններ, տրամախօսութիւններ, խմբական մարզանքեր, հայկական պարեր, որոնց կարգին ամենէն աւելի գեղեցիկ պատուութիւն մը թողուց «Ընդհատակներու պարը», զոր այնքան բնականութեամբ ներկայացուցին ճերմակներու և կապոյտներու մէջ թեւաւոր պղտիկները Մանկապարտէզի: Վարժարանի Հոգ. Տեսուչ Տ. Սերոյբէ Վրդ. Մանուկեանի անդեկատուութենէն յետոյ՝ Մանկապարտէզի կեանքին պատկերը պարզող, 60 շրջանաւարտ փոքրիկներ ստացան իրենց վկայականները, նախագահ Հօր ձեռքէն:

\*

Նախակրթարանի Ամալիբըի Հանդէսը և Վկայականաց բախումը կատարուեցաւ Հինգշաբթի, 30 Յուլիս 1942, երեկոյեան ժամը 5ին, նոյնպէս ժառ. Վարժարանի բակին մէջ, նախագահութեամբ Գեոր. Տ. Կիւրեղ Ի. Վրդ. Ի որայեղեանի, ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և բազմաթիւ հանդիսականներու: Տեղի ունեցան արտասանութիւններ՝ հայերէն, անգլիերէն եւ արաբերէն լեզուներով, երգեր՝ Գ. Դ. Ե. Դասարաններու կողմէ առանձնաբար եւ երկձայն, և ընտրեալ խումբով մը՝ բազմաձայն «Ով մեծաքաննչ դու լեզուսն: Զ. Դասարանի սղաքը ներկայացուցին Կոմիտաս Վարդապետի պատանութիւնը և գիւղիկեանքը պատկերող թատերգութիւն մը (1 արար): Նախակրթարանի Տեսուչ Հոգ. Տ. Սերոյբէ Վրդ. Մանուկեան կարդաց տեղեկագիրը Վարժարանի ներկայ տարուան կեանքին և ձեռք բերուած արդիւնքներուն: Հրատեղատի երգէն՝ բարձրագոյն երկու դասարաններու սանուհեաց կողմէ փոխերգուած, և ուղերձէն յետոյ (զոր Զ. Դասարանի սանուհիներէն մին կարաց) 24 շրջանաւարտներուն բաշխուեցան վկայականներ՝ ըստ արժանեաց, որոնցմէ ութը

ստացան Պատիւ, իսկ մնացեալները Յաջողութեան վկայականներ. իսկ Նորին Ամենապատուութեան եւ Վարժարանի Տեսչութեան կողմէ տրուեցան մէյմէկ Նարեկ և Փամպուկը: Դասերու մէջ յառաջադէմ ելողներուն, և ամբողջ զպրօցին ուսմանց մէջ առաջին և երկրորդ հանդիսացուներուն իբրեւ մրցանակ տրուեցան զանազան գիրքեր և մետաղներ: Հանդէսը փակուեցաւ նախագահ Հօր խօսքովը, ուր անցամ մը եւ շրջանաւարտները կը կանչուէին սեկուելիւ կրթութեան հանդէպ իրենց հոգիներուն մէջ դրուած, ստեղծուած մտապատկերներուն ետեւէն, որպէս զի տարիներուն հետ անին հասակով, իմացական շնորհներով, հոգիով, շարունակելու համար շարանը այն աշակերտութեան, որուն յաջողութիւնները օտար վարժարաններէն ներս, հրճուանքով և հպարտութեամբ կը լիցնէ հոգիները Ս. Թարգմանչաց Նախակրթարանի բանաւոր այս հունձքին իրենց բաժինը բերող բոլոր մշակներուն:

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք Է Ի Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

\* 12 Յուլիս Կիր. — Վարդապետ: Տօն Ալլակետպութեան Տեսուչ: Ս. Պատարագը Ի Ս. Յակոբ մատուց Տ. Սուրէն Վրդ. Եղիսկոպտական խորով: Տարիներէ ի վեր այնքան չուրջով պանծացուած այս տօնը՝ այս տարի չունեցաւ նախընթաց տարիներու պայծառութիւնը: Միաբանութիւնը և ժողովուրդը խորապէս կը զգար բացակայութիւնը Նորին Ամենապատուութիւն Ս. Պատարագ Հօր՝ իր Ֆիլիիթական անհանդստութեան պատճառաւ զգալի Լիբանան կատարած իր նամարողութեան հետեանքով:

\* 13 Յուլիս Բշ. — Մեծերոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Փրկիչ, քարոզից Գեոր. Տ. Կիւրեղ Ի. Վրդ. «Եթէ մեռանիցի մարդ՝ կեցցէ՞» բնաբանով: Յոյց տուաւ թէ մէկն կրօնք փորձած է լուծում մը բերել մարդերը տագնապեցնող այս հարցին, բայց բոլորէն զերազանց ուղղական պատասխանը քրիստոնէութեան բերածն է, կենդանի խորհուրդովը Աստուածորդոյն մարդեղութեան, օրինակովը Անոր կեանքին և վառաւոր յարութեան:

\* 19 Յուլիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Յակոբ, քարոզից Տ. Հմայեակ Վրդ., ներկայացնելով բարի հովիւին եւ անձնուրաց վարդապետին տիպարը Յիսուսի անձին մէջ, Հաւաստեց թէ մեծ հոգիները, արտաքնապէս խոնարհ երդիքներու ներքեւ չեն վարանիք ասորի իրենց մեծութիւնը, եւ Յիսուսի օրինակով նուազ աչքառու չէ պատմութեան մէջ թիւը այսպիսիներու:

\* 2 Օգոստոս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Յակոբ, քարոզից Տ. Գէորդ Վրդ. «Զի մի՞ ոք զքո մանկուսնք արձամարհեսցէ, այլ օրինակ լինիլիք հաւատացելոց բանիւք, գնացիւք . . . » բնաբանով. յորդրեց բոլոր մեծերը, ծնողք ըլլան անոնք թէ դատարարակ, եղբայր թէ բարեկամ, զգուշանալու բոլոր այն

վարձուքներէ, որոնք գէշ տղաւորութիւններ պիտի ձգեն յիշողութեանը մէջ մանուկներուն:

\* 9 Օգոստոս Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ի Ս. Յարութիւն, քարոզեց Տ. Նոսայր Վրդ. նիւթ առնելով կեանքի նպատակը: Բացատրեց թէ խորհող մարդը չի գտնուիր կեանքի երկրորդական նպատակներով, այլ կը ցանկայ հանդնալ անոր իսկական նպատակը որ է հոգիի ազնուացումը:

\* 16 Օգոստոս Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ի Ս. Յակոբ. քարոզեց Տ. Հայկազուն Վրդ. «Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի» բնաբանով. բացատրեց թէ Գրիստոսով միայն եկաւ կենդանի լոյս այս աշխարհի վրայ: որ գերազանցեց երկրային ու երկնային միւս լոյսերը: Իր Աւետարանը այդ լոյսի միակ է ամենամեծ ջանն է, զոր Յիսուս ասուաւ մարդկութեան, երբ ինք վերացաւ այս աշխարհէն:

\* 23 Օգոստոս Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ի Ս. Յարութիւն, քարոզեց Տ. Պարգե Վրդ. «Երանի ոգորմամբ» բնաբանով. ցոյց տուաւ թէ ոչորմամտութիւնը առաքինութիւն ըլլալով ի վարձատրութիւնը ունի: Ոչ թէ մարդից կողմէ հասկցուած ոչորմամտութիւնը այլ Յիսուսի կողմէն երանուած ոչորմութիւնը: Յորդորեց որ հաւատացեալները ըլլան ոչորմամբ, գթած, ինչպէս որ Աստուած ոչորմամբ է հանդէպ իր արարածներուն:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

\* 18 Յուլիս Շր. — Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. և Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Հայրիկ վարդապետք մեկնեցան Պէյրութ, յայց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ յանկարծակի հիւանդացած ըլլալով՝ կը դարմանուէր տեղւոյն Ամերիկեան Հիւանդանոցին մէջ:

\* 21 Յուլիս Գշ. — Կէսօրէ առաջ Յունաց Պատրիարքարանի Աւագ-Թարգման Արշիմանտրիդ Թէոփորոս այցելեց Պատրիարքարանս, և ի գիրմաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին՝ տեղեկութիւններ ուղեց Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարք Հօր առողջական լիճակի մասին, մաղթելով արագ ապաքինում և շուտափոյթ վերադարձ նորին Ամենապատուութեան:

\* 27 Յուլիս Բշ. — Կէսօրէ վերջ Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Վսեմ. Քիոթ-Թօշ այցելեց Պատրիարքարանս, և մեծ զանլիճին մէջ ընդունուեցաւ Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ի, Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. և Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հրազդան Արեղայի կողմէ: Նորին Վսեմութիւնը տեղեկութիւններ

առաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր առողջական վիճակի մասին, մաղթելով Ն. Ամենապատուութեան արագ ապաքինում և շուտափոյթ վերադարձ:

\* 30 Յուլիս Եշ. — Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հրազդան Արեղայ այցելեց Յունաց Պատրիարքարանը, և ի գիրմաց Ս. Աթոռոյս՝ շնորհակալութիւն յայտնեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր հիւանդութեան առթիւ իրենց կողմէ ցոյց տրուած բարեկատ հետաքրքրութեան համար, և այս առթիւ տեղեկութիւններ հաղորդեց Սրբազան հիւանդի առողջական վիճակի բարելաման մասին:

\* 5 Օգոստ. Գշ. — Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Հայրիկ վարդապետք վերադարձան Պէյրութէն, ուր գացած էին յայց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

\* 9 Օգոստ. Կիր. — Հոգ. Տ. Տ. Սերովբէ և Եղիշէ վարդապետք ուղևորեցան Պէյրութ, յայց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

\* 14 Օգոստ. Ուր. — Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. վերադարձաւ Պէյրութէն, ուր գացած էր յայց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

\* 17 Օգոստ. Բշ. — Ազատ և Գատերազմող Յրանսայի տեղւոյն նոր Ընդհ. Հիւպատոս Վսեմ. Գօնդ Տիւ Նայար իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանս, և մեծ զանլիճին մէջ պատշաճ մեծարանք ընդունուեցաւ Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ի, Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. և Փոխ-Թարգման Հոգ. Տ. Գրիգոր Արեղայի կողմէ: Պ. Ընդհ. Հիւպատոսը տեղեկութիւններ ուղեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր առողջական վիճակի մասին, և մաղթանքներ ըրաւ Ն. Ամենապատուութեան շուտափոյթ ապաքինման համար: Այս առթիւ այցելեց նաև Ս. Յակոբեանց Մայր Տաճարը:

\* 19 Օգոստ. Գշ. — Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ., հետն ունենալով Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հրազդան Արեղան և Քարտուղար Պր. Կարպիս Հինդլեանը, ի գիրմաց Ս. Աթոռոյս՝ փոխադարձ այցելութիւն տուաւ Ազատ և Գատերազմող Յրանսայի քաղաքին նոր Ընդհ. Հիւպատոս Վսեմ. Գօնդ Տիւ Նայարին:

\* 25 Օգոստ. Գշ. — Հոգ. Տ. Տ. Սերովբէ և Եղիշէ վարդապետք վերադարձան Պէյրութէն, ուր գացած էին յայց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

\* 27 Օգոստ. Եշ. — Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. մեկնեցաւ Պէյրութ, յայց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

\* 28 Օգոստ. Ուր. — Երեկոյան, Պէյրութէն Ս. Աթոռ ժամանեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որուն կ'ընկերակցէին Գեր. Տ. Սրտաւազ Ս. Արքեպս., Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., Հոգ. Տ. Տ. Շնորհք և Ղեռնդ վարդապետներ, և Ազն. Տէր և Տիկին Տօքթ. Եէնի - Գօմշեան: